Հասցեատեր՝

«Նոա ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ noahfcarm@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06.11.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-083
Խախտում՝	1. «Նոա-2» թիմի ֆուտբոլիստ Աշոտ Քոչարյանի (13397) ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը, (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 2. Խաղի ժամանակահատվածում մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը (Հավելված 1 Ա, 69-րդ կետ) 3. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների սակավաթիվ լինելը (Հավելված 1 Ա, 34-րդ կետ) 4. Դաշտի տեր թիմի երկրպագուի կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտ իր նետելը (Հավելված 1 Ա, 22-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Նոա-2» - «Գանձասար», 25.10.2023թ. (2:3)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Նոա-2» թիմի ֆուտբոլիստ Աշոտ Քոչարյանի (13397) ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար վերջինիս որակազրկել 2 (երկու) խաղով և «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։ Որակազրկումը

տարածվում է 2023 թվականի հոկտեմբերի 25-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

2. «Նոա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»: «Նկատողություն» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ ցանկացած կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:
3. Պատասխանատվության միջոցների համակցության միջոցով խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների սակավաթիվ լինելու և դաշտի տեր թիմի երկրպագուի կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտ իր նետելու համար «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրհիսունապատիկի՝ 350,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: